ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հունիսի 2020 թվականի N 204-Ա

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 111-րդ հոդվածի 2-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի փետրվարի 2-ի N 32-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 6.2-րդ կետը, ինչպես նաև *2020 թվականի մայիսի 26-ի N 01/14/03694-2020 գրավոր ծանուցումը*՝ **որոշում եմ.**

1. ***Վեներա Եղիշի Հովհաննիսյանին*** 2020 թվականի հունիսի 8-ից ազատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Քասախի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ *լուծելով նրա հետ 2013 թվականի հունիսի 6-ին կնքված N 17 աշխատանքային պայմանագիրը*:

2. Մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մրցույթի արդյունքներով *(տնօրենի թափուր պաշտոնում)* պաշտոնի նշանակումը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Քասախի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել ***Վեներա Եղիշի Հովհաննիսյանին***:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թվականի հունիսի 08
ք. Հրազդան